

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

**Ո՛Վ ՄԱՅՐ, ԺԱՄԱՆԱԿ ԱՆՅՈՒՐ
ԶԱԿԻՂ ՅԵՏ**

Մայր մը, որ ժամանակ չանցնէր
զաւակին հետ իր զաւակը չի կրնար
իրեն կապուած մնալ երբ մեծնայ: Կան
մայրեր, որոնք հեռատեսիլի հետ աւելի
ժամանակ կ'անցնեն քան՝ իրենց զա-
ւակներուն հետ: Կան մայրեր, որոնք
իրենց ընկերուհիներուն եւ իրենց «ըսի-
րսաւ»-ներուն հետ աւելի ժամանակ
կ'անցնեն քան՝ իրենց զաւակներուն
հետ:

Կին մը մայր չ'ըլլար, երբ զաւակ կը
բերէ աշխարհ, այլ՝ մայր կ'ըլլայ, երբ
իր զաւակին մայրութիւն կ'ընէ: Իսկ
մայրութիւն ըսելով կը հասկնամ՝ կա-
տարեալ հոգատարութեան ու գորովի,
եւ ամբողջական սիրոյ ու խանդաղա-
տանքի ցուցաբերում իր զաւակին հան-
դէպ:

Հոգեբաններ կ'ըսեն, թէ մօրը եւ հօ-
րը սերը չվայելող մանուկը, երբ մեծնայ՝
դժուարութիւն կ'ունենայ ուրիշը սիրե-
լու:

Եսայի մարգարէն կը խօսի իրենց
զաւակները հանգստացնող մայրերու
մասին (66.13): Զաւակ մը, ինչպէս կը
հանգստանայ, այլ խօսքով, ինչպէս
հոգեկան հանգիստ ու երջանկութիւն
ձեռք կը ձգէ, եթէ ոչ մօրը սիրովն ու քաղց-
րութեամբ: Այո՛, մօր մը սերն է, որ հո-
գիի ու սրտի հանգստութիւն ու խաղա-
ղութիւն կը պարգեւէ իր զաւակին:

Յարգելի մայրեր, ժամանակ ան-
ցուցէք ձեր զաւակին հետ, անիմաստ
զբաղումները կեանքին մէջ ժամանա-
կաւոր են: Չեր զաւակները ձեր գան-
ձերն են: Տէր եղէ՛ք եւ ժամանակ տրա-
մադրեցէ՛ք ձեր զաւակներուն:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ԱՂՕԹՔՆԵՐՈՒՂ

**ՊԱՏԱԽՍԱՆԸ ԿԸ ՓՆՏՈՒՄ ԱՍՏՈՒԾՄԷ,
ԿԱՐԴԱ՛ Սաղմոս 28**

Տէր, օգնութիւն կ'ուզեմ քեզմէ,
դո՛ւն ես իմ ապաստանս, ականջներդ
մի՛ փակեր. լուռ մնալդ պատճառ
կ'ըլլայ որ ես ողջ-ողջ գերեզման իջ-
նեմ:

Լսէ՛ խնդրանքս, երբ որ քեզմէ օգ-
նութիւն կ'աղերսեմ, երբ ձեռքերս դէ-
պի քու սուրբ տաճարդ կը բարձրա-
ցընեմ: Ձիս մի դասեր հետը ամբա-
րիշտներուն, հետը անոնց՝ որոնք չա-
րիք կը հասցնեն ուրիշներուն. որոնք
իրենց խօսքերուն մէջ սիրալիր են մար-
դոց հետ, մինչեւ իրենց սիրտերուն
մէջ չարութիւն կայ: Պատուիսէ՛ զա-
նոնք իրենց գործերուն համաձայն,
տո՛ւր արժանի պատիժը իրենց չարա-
սիրտ վարմունքին, իրենց ըրածին
համեմատ վարուէ դուն ալ իրենց հետ,
հատուցանելով իրենց այն՝ ինչ բանի
որ արժանի են: Բանի անոնք կ'ար-
համարեն Տիրոջ գործը եւ ինչ որ ան
ստեղծեց, Տէրը զանոնք պիտի կործանէ
այնպէս որ ա՛լ երբեք չկանգնին:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԷՆ

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն
Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին,
եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝
Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ
ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կար-
դալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱՐՈՒՆԱԿԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ jerak Ծրագր թերթ](#)



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՍՐԷՂ ԽՍ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ
(Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿՐԱԿԻ, 20 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020

ԹԻՒ 38

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 14.3-17: Բ. Կր. 10.18-11.10

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 10.1-12

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

10.1-12

Յիսուս Կափառնայումէն Հրեաստանի կողմերը եկաւ՝ Յորդանան գետին միս
կողմէն անցնելով: Դարձեալ խուռն բազմութիւն մը իր շուրջը հաւաքուեցան, եւ
Յիսուս սկսաւ անոնց ուսուցանել իր սովորութեան համաձայն:

Փարիսեցիները զինք փորձելու նպատակով մօտեցան իրեն եւ հարցուցին.
«Ո՞նեւ մէկը իրատւոյն ունի՞» իր կիներ արձակելու»:

Յիսուս պատասխանեց. «Մովսէս ձեզի ի՞նչ պատուիրեց»:

Անոնք ըսին. «Մովսէս արտօնեց բաժանման թուղթ տալ կնոջ եւ արձակել
զայն»:

Յիսուս ըսաւ. «Մովսէս ձեր անհանդուրժող նկարագրին պատճառով այդ
օրէնքը սահմանեց ձեզի: Մինչդեռ սկիզբէն, ստեղծագործութեան ժամանակ,
Աստուած արու եւ էք ստեղծեց մարդիկը եւ ըսաւ. ”Այս պատճառով այրը պիտի
ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան”:
Հետեւաբար այլեւս երկու չեն, այլ մէկ մարմին: Ուստի ո՞նեւ մէկը թող չբաժնէ
անոնք, որ Աստուած միացուց»:

Երբ տուն դարձան, աշակերտները նոյն նիւթին մասին դարձեալ հարցուցին:
Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ այրը արձակէ իր կիներ եւ ուրիշ մը առնէ՝
շնութիւն ըրած կ'ըլլայ անոր դէմ: Նոյնպէս ալ, կիներ եթէ ձգէ իր ամուսինը եւ
ուրիշ մը առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ»:

ԱՌԱԿՆԵՐ

Եթէ այսպէս քիչ մը քնննաս, քիչ մը հան չիս, քիչ մը մրափես, քիչ մը ձեռքերդ
կուրծքիդ ծալած մնաս, ահա այն ատեն աղքատութիւնը չար ուղեւորի մը նման
քեզ պիտի դիմաւորէ եւ չբաւորութիւնը ժիր սուրհանդակի մը նման դրանդ առջեւ
պիտի կանգնի: Բայց եթէ դուն ես աշխատասէր ըլլաս, ամառդ աղբիւրի նման
քեզ պիտի ողջունէ եւ չբաւորութիւնը չար մարդու մը պէս ինքզինք պիտի հալածէ:

(Առակ 6.10-11)

**ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՎ ՄԱՎԿՆԵՐ**

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԵՆ
14.3-17**

Այն օրը Տէրը վերջ պիտի դնէ քու ցաւերուդ, նեղութիւններուդ եւ գերութեան անտանելի ծառայութեանդ, եւ պիտի հանգստացնէ քեզ: Այն օրը հետեւեալ ողբանման առակը պիտի կարդաս Բաբելոնի թագաւորին վրայ, ըսելով. «Ի՛նչպէս կորսուեցաւ բունաւորը, ի՛նչպէս կորսուեցաւ աշխարհը ցնցողը:

Ահաւասիկ Տէրը խորտակեց մեղաւորներուն լուծը, լուծը իշխաններուն, եւ անխնայ եղաւ անոր հանդէպ՝ որ կատաղի մոլեգնութեամբ եւ անտանելի տանջանքներով ազգերը կը կոտորէր:

Ամբողջ աշխարհ խաղաղեցաւ եւ հանգրստացաւ. մարդիկ ուրախութեամբ կ'աղաղակեին:

Լիբանանի եղեւիներն ու մայրիներն ալ կը ցնծան եւ կ'ըսեն. «Այն օրէն որ դուն կորսուեցար՝ ոեւէ փայտահատ չեկաւ մեզ կտրելու»:

Դժոխքն իսկ տակնուվրայ եղաւ, երբ դուն հոն իջար: Միանգամայն ելան կանգնեցան աշխարհակալ բոլոր հսկաները, որոնք ազգերու թագաւորները իրենց աթոռներէն վար ձգած էին:

Բոլորը միասին ըսին քեզի. «Դո՛ւն ալ մեզի պէս բռնուեցար եւ մեր վիճակին ինկար:

Քո՛ւ ալ փառքդ գերեզման իջաւ եւ ուրախութիւնդ թաղուեցաւ: Այսուհետեւ ցեցերը քեզի ներքնակ պիտի ըլլան, իսկ որդերը՝ վերմակ»: Ի՞նչպէս ինկար երկինքէն, ո՛վ Արուսեակ, որ առաւօտուն կը ծագէիր. ի՛նչպէս գետինին հաւասարեցար, դուն՝ որ բոլոր ազգերը ուրի տակ առած էիր:



**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԵՐԿՐՈՐԴ ՆԱՍԱԿԸ
ԿՈՐՆԱԹՅԻՆԵՐՈՒՆ
10.18- -11.10**

Իսկական ընտրուածը ան չէ՛ որ ինքզինք կը գովէ, այլ՝ ան որ Տիրոջ կողմէ կը գովուի: Սակայն, յուսամ քիչ մը ներողամիտ կ'ըլլաք եթէ անմտօրէն ես ալ պարծենամ, ըրածներս յիշեցնելով ձեզի: Իսկ դուք համբերութեամբ լսեցէ՛ք:

Ես ձեզի հանդէպ Աստուծոյ նախանձախնդրութեամբ լեցուած՝ կ'ուզեմ, որ միայն Քրիստոսը սիրէք, ինչպէս մաքուր կոյս մը, որ իր սէրը կը վերապահէ անոր՝ որ իր ամուսինը պիտի ըլլայ: Բայց կը վախնամ, որ ձեր միտքը ապականի եւ հեռանաք Քրիստոսի հանդէպ ամբողջական եւ մաքուր նուիրումէն, ճիշդ ինչպէս Եւան խաբուեցաւ օձին խորամանկ սուտերէն: Կը վախնամ, որ նոյնքան դիւրութեամբ ընդունիք ոեւէ մէկը, որ մեր քարոզածէն տարբեր փրկիչ մը, ձեր ստացած Հոգիէն տարբեր հոգի մը, կամ ձեր ընդունած Աւետարանէն տարբեր աւետարան մը կը քարոզէ ձեզի: Չեմ գիտեր, թէ ես ձեր այդ նշանաւոր «առաքեալ»-ներէն բանով մը ես կը մնամ: Թէեւ քարոզար խօսող մը չեմ, բայց խօսածս գիտեմ: Եւ կարծեմ ատիկա ապացուցանեցի ձեզի ամէն ինչով: Արդեօք սիսա՞լ ըրի, որ Աստուծոյ Աւետարանը ձրիօրէն քարոզեցի ձեզի եւ ինքզինքս խոնարհեցուցի՝ ձեզ բարձրացնելու համար:

**ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ
ՍԻՄԷՈՆ ՍԻՆԱԿԵՑԻ**

Արդեօք յա՞ծ էք այս անունը, կամ այս սուրբին մասին: Նախքան ծանօթանալը յիշենք, թէ մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն Սիմէոն Սիւնակեցիի տօնը այս տարի կը գուգադիպի Երկուշաբթի՝ 21 Սեպտեմբերին:

Սուրբացի սուրբ մը, որ սիւնի մը գագաթին վրայ անցուցած իր արտասովոր ճգնական կենցաղին համար աշխարհահռչակ դարձաւ: Աղքատիկ ծնողքի զաւակ, ան իր կեանքը անցուց նախ վանքի մը մէջ, երկար ատեն ապաշխարութեան զրկանքներու ենթարկելով ինքզինքը: Երեսուն երկու տարեկան հասակին ստացաւ իր հոգիին սրբացման կազմաւորումը իր աղօթանուէր ճգնութեամբը, քարէ սիւնի մը բարձունքին վրայ՝ ուր յարատեւաբար մնաց ամբողջ 37 տարիներ, մինչեւ իր մահը (459): Ան հետզհետէ աճեցուց սիւնին բարձրութիւնը, որուն վրայ երեսուն տարիներէ ի վեր ապրած էր եւ իր մեռած ատեն, վաթսուն ոտք բարձր էր: Սիւնին կատարը տափակ էր, երեք ոտք տրամագիծով: Անոր վրայ կը մնար կանգուն, ծնրադիր կամ նստած, բայց առանց պառկելու: Ծոմապահութիւնը անհաւատարի ըլլալու չափ խիստ էր. ամբողջ Մեծ Պահոց ընթացքին ոչինչ կ'ուտէր: Սիւնը հաստատուած էր բլուրի մը վրայ, ի Սուրբա կամ ի Կիրիլիա, ու ժողովուրդը ամէն օր կը խոնուէր անոր բոլորապէս, իրմէ աղօթք խնդրելու կամ իր քարոզները լսելու համար: Իր կեանքը տեսակ մը հրաշք եղաւ իր ապրած դարուն մէջ եւ առարկայ՝ ամէնուն գարմանքին:

Նայելով Թէոդորիտոս պատմագիրին եւ ուրիշ մատենագիրներու, իր մասին պատմուածքները կրնանք ընդունիլ իբրեւ իրականութիւն:

ԶԻՐԱՐ ՀԱՍԿՆԱԼ

Կարդա՛ Սուրբաց 16.16-22

Ամուսինի մը համար լաւագոյն ձեւերէն մէկը իր կինը սիրելու՝ զայն հասկնալն է: Պետրոս առաքեալ կ'ըսէ, թէ շատ կարեւոր է ամուսինի մը համար «Բնակիլ (իր կնոջ հետ) գիտակցութեամբ» (Ա. Պետ.3.7):

Այս սկզբունքը գործնական է երկուստէք: Ամուսիններ ալ նոյնպէս կ'ուզեն հասկցուիլ: Իսկութեան մէջ բոլորս ալ կ'ուզենք հասկցուիլ: Ամէն մարդ, ամուսնացած ըլլալ կամ ո՛չ, կ'ուզէ հասկցուած ըլլալ ուրիշներու կողմէ, որքան կարելի է խորապէս եւ ամբողջութեամբ: Բոլորս ալ այդ կարծիքով ծնած ենք եւ այնպէս կը թուի, թէ այդ պահանջը պիտի չչքանայ երբեք: Տկար եւ խուսափոխական խօսք է ըսելը, թէ մենք զիրար չենք կրնար հասկնալ: Մենք կրնանք եւ պէտք է հասկնանք: Թերեւս այդ մէկը ժամանակի կը կարօտի: Ժամանակ՝ իրարու ներկայութեան մէջ գտնուելու, հարցումներ հարցընելու, զիրար ուշադրութեամբ մտիկ ընելու: Շատ պարզ է եւ նոյնպէս երբեմն շատ դժուար: Անշուշտ ոչ ոք կրնայ իր դիմացինին հոգիին խորհրդաւորութիւնը ամբողջութեամբ հասկնալ: Սակայն կրնանք ամէն օր նոր բան մը սորվիլ: Իմաստուն առակագիրը հասկացողութիւնը կը կոչէ «կեանքի աղբիւր» (Առակ 16.22), խորունկ իմաստութեան աղբիւր մը բոլոր անոնց համար, որ զայն կը փնտռեն:

Հասկնալը ժամանակի կը կարօտի եւ ամենէն թանկագին նուէրներէն մէկն է, որ կրնանք ուրիշներու տալ: Որքա՛ն ժամանակ տրամադրելը մեր շուրջիններուն ցոյց կուտայ մեր գանոնք սիրելու չափը: Խնդրէ՛ Աստուծոմէ, որ քեզի շնորհք տայ ժամանակ տրամադրելու եւ հասկնալու կեանքիդ մէջ եղող կարեւոր մարդիկը:

«ՄՏԻՎ ԸՆԵԼԸ ԲՅՉ ԴՈՒՉ ՍԸՆ Է
ՀԱՍԿՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ»: